

ՀՏԴ 82-9Բ -20Հայ գրականություն*Զինաիդա ԲԱԼԱՅԱՆ**ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.**E-mail: zinaida.54@bk.ru*

ՍԻԼԼՈԳԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՐԱԴԻԳՄԱՆԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԱՑԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԸ. «ԱՆԴՐԵԱՍ ԵՐԵՑ»

Հայացքը սկսվելով հայ ժողովրդի պատմության բարդ ու հակասական ժամանակաշրջաններից մեկի՝ XVII դարի առաջին տասնամյակներում տեղի ունեցած պատմական ծանր իրադարձությունների նկարագրին, մասնավորապես շահաբաշխ առաջին արշավանքներից (1604 թ. սկսած) առաջացած քաղաքական ծայրահեղ ծանր իրավիճակին, այդ ամենի կիզակետում գտնվող հայ ժողովրդի գլխին իջեցված ահավոր հարվածից՝ մեծ սուրբունից՝ գաղթից և դեշիրմեից՝ մանկաժողովներից առաջացած սարսափին, Մուրացանը ելնելով ազգային գաղափարաբանության յուր ընկալումներից, իր երրորդ պատմական երկի՝ «Անդրաես Երեց»-ի առանցք է դարձնում էթնիկական տրվածքի փիլիսոփայական ընդհանրացումը՝ այս անգամ մասնավորի զոհաբերումը հավատի հաղթանակին վերապահելով:

Եռյակի (Ռուզան, Գևորգ Մարգպետունի, Անդրաես Երեց) կերպավորումների բարոյահոգեբանական այս միասնությունն է հատկանշում Մուրացանի ընկալած պատմության փիլիսոփայությունը՝ գեղարվեստի առանցքներում, իր ներկայացրած դասերով նորովի ընթերցվելով արդի ժամանակաշրջանի հայ պատմավիպասանների կողմից՝ միաժամանակ պահպանելով ավանդույթի ուժը:

Բանալի բառեր՝ «Բազմավեպ», գաղթ, Առաքել Դավրիժեցի, բանավեճ, մանկաժողով, Ներսես Մոկացի, պոլեմիկա, «Գևորգ Մարգպետունի», գենեֆոնդ:

3. Балаян

**ФИЛОСОФСКИЕ, ИСТОРИКО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ
ПАРАДИГМЫ СИЛЛОГИЗМА И ИСКУССТВО МУРАЦАНА:
"АНДРЕАС ЕРЕЦ "**

Коснувшись одного из самых сложных и противоречивых периодов истории армянского народа - тяжелых исторических событий первых десятилетий XVII века, в частности, крайне тяжелой политической ситуации, возникшей от первых нашествий шаха Абасса (начиная с 1604г.) и ужаса великого изгнания, переселения, девишirme – страшных испытаний, выпавших на долю находящегося в центре этих событий армянского народа, Мурацан, исходя из своих представлений о национальной идеологии, в своем третьем историческом произведении «Андреас Ерец» акцентирует внимание на философском обобщении этничности, на этот раз прибегая к идее самопожертвования во имя спасения веры.

Нравственно-психологическое единство трех персонажей (Рузан, Геворг Марзпетуни, Андреас Ерец) характеризует лежащую в основе творчества Мурацана философию истории, преподнесенные уроки которой современные армянские авторы исторических романов осмысливают по-новому, в то же время сохраняя силу традиции.

Ключевые слова: "Базмавеп", миграция, Аракел Даврижеци, дебаты, отбор детей, Нерсес Мокаци, полемика, "Геворг Марзпетуни", генофонд.

Z. Balayan

**PHILOSOPHICAL, HISTORICAL AND PSYCHOLOGICAL
PARADIGMS OF SYLLOGISM AND THE ART OF MURATSAN:
"ANDREAS ELDER "**

The article describes one of the one of the difficult and controversial periods in the history of the Armenian people - the difficult historical events that took place in the first decades of the XVII century, in particular, from the first Shahabas invasions (1604) to the extremely difficult political situation that arose, at the center of all this is the Armenian people, who are receiving a terrible blow from the great exile, from resettlement, from the grave, to the horror and selection of children. Muratsan, based on his ideas about national ideology, makes the main thing in his third historical work "Andreas Yerets" an ethnical theme, this time reserving the sacrifice of the private for the victory of faith.

This moral-psychological unity of the three characters (Ruzan, Georg Marzpetuni, Yerets Andreas) characterizes the philosophy of honor of Muratsan, the art re-read in the lessons is based on a new reading of the prayers of modern Armenian historians, at the same time, the strength of tradition is remained.

Key words: "Bazmavep", migration, Arakel Davrizhetsi, debates, selection of children, Nerses Mokatsi, polemics, "Gevorg Marzpetuni", gene pool.

*Ով տեսել է ներկան, նա արդեն տեսել է ամեն ինչ,
անցյալը՝ անցածի անհունում, և գալիքը՝ ժամանակի անվերջում...*

Մարկոս Ավրելիոս

*Նա մշտապես որոնել է կապը անցյալի հետ, ներկա
իրադարձությունների իմաստն ստուգել պատմության փիլիսոփայությամբ...*

Սերգեյ Սարինյան

Մուրացանի ստեղծագործությունը հայ դասական գրականության անկրկնելի ու բարձրարվեստ, ունիկալ էջերից է:

Ըստ «Բազմավեպ»-ի կարծիքի, եթե Մուրացանի երկերը թագմանվեին օտար լեզուներով, ապա նա՝ իր երկերով հանդերձ, համաշխարհային գրականության երևելիների շարքը կդաավեր...

Ըստ Ա. Տերտեյանի՝ հայ պատմավիպասանության երեք դեմքերից յուրաքանչյուրը (Ծերենց, Բաֆֆի, Մուրացան) առանձնանում է իր ոճով, արտահայտչամիջոցներով, կերպարների համակարգի ստեղծմամբ, բայց միանգամայն այլ է Մուրացանի լեզուն և ոճը:

Հիրավի, ամեն տեղ ու ամեն ինչում առանձնացող գրական երևույթ՝ բառիս բոլոր իմաստներով՝ սահմանագծող ու սահմանազատող՝ մինչև ուղն ու ծուծը թաթախված պատմափիլիսոփայական ուրույն գեղարվեստով:

Ապրած ժամանակաշրջանի քաղաքական սուր հարցադրումներին հետևելով, փորձելով դրանց պատասխանել գեղարվեստի առանցքներում, Մուրացանը հայացքը դարձրեց դեպի հեռավոր ժամանակների խորխորատները՝ իր ժողովրդի պատմական անցյալի ծանր կիզակետերից, ծանր մաքառումներից դասեր առնելու, ներկա և ապագա սերունդներին զինելու ազգայնականության, ազատասիրության, հայրենասիրության, անձնուրացության գործոններով՝ արժևորելու ազգային գաղափարաբանության, պետականության այն մայրաբերդը (գերակա համակարգերի՝ ազգային միաբանության, պետականության կառույցի, ազատության, ինքնիշխանության, լեզվի, հավատի պահպանության, անխափան կոդավորում), որը երբեմնակի անտեսվել, դավաճանվել է անհավատարմությունից, թշնամյաց հետ գործակցելուց, ընդհանուր շահերի անտեսումից, անմիաբանությունից՝ ներսից և դրսից խարխրվել, թշնամիների հարձակումներից՝ ավերումների, կոտորածների, պետականության երերման ու կորստի, հավատի սասանման, ցեղասպանության ավերիչ գործոնների ենթարկվել, հարցականի տակ դնելով հայ ժողովրդի լինելության պատմական փաստը:

XX դարի հայ գրականության, բանաստեղծական արվեստի հանճարափայլ գագաթի՝ **Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի»**-ի փիլիսոփայական ուղերձները՝ գալիքին ուղղված, մասնավորաբար մշակութային հանգանակ էր նաև **պոեզիան** հատկանշող 60-ականների սերնդին պատգամված:

Մուրացանի ստեղծագործությունն իր հերթին, ավանդութակիր հարուստ շերտերով՝ նորի և ավանդականի պարուրաձև մեկնադաշտ է նախանշում՝ գեղարվեստի և պատմության, հոգեբանական ներսուզումների դասեր, գաղափարակիր հերոսների պատմական և վիպական համակարգ առաջադրելով: Թերևս այն՝ առաջին հերթին, 60-ականների սերնդի համար սկզբնադուռ նախանշելով, **արձակի** սահանքներում կանգնած՝ ժխտումի և հաստատումի ելած ոգեկիրներին, անցյալի դասերին, ներկայի և ապագայի սերմնակիր սերմնացաններին՝ հայոց ճակատագրի քաղաքական և փիլիսոփայական մեկնումներին հասու դարձնելով, անցյալից առաքված, ներկայի և ապագայի սերունդներին ազգային անսխալական ճանապարհ առաջնորդելով:

Հետևենք Մուրացանի հավատի հանգանակը նախանշող երկի՝ «Անդրես Երեց»-ի մեկնաբանական շերտերի հարցադրումների քննությանը:

XIX դարավերջին հայ գրականության մեջ գերշխում էին կուսակցական դիրքորոշումները, պոլեմիկական, աչառու վերաբերմունքը թե՛ գրական երկերի, թե՛ նրանց հեղինակների նկատմամբ: Այդ վերաբերմունքը նկատելի էր հատկապես երիտասարդ մի շարք գրողների (Շիրվանզադե, Մուրացան, Թումանյան, Հովհաննիսյան, Փափագյան) և ընդհանրության մեջ՝ ոչ մշակական գրողների (Հայկունի, Բարխուդարյան և ուրիշներ) հանդեպ:

Գրական դաշտում առկա այդ երևույթը ամբողջացված էր մասնավորապես Լեոյի «Ռուսահայոց գրականությունը. սկզբից մինչև մեր օրերը» և «Վե՛պ թե պատմութիւն» և այլ գրաքննադատական աշխատությունների, հոդվածների մեջ: Քննադատ Լեոյի հասարակագիտական տեսության դեմ պարբերական մամուլում հանդես եկան մի շարք գրողներ, տեսաբաններ՝ Գ. Ենգիբարյան, Մ. Կյուրճյան, Գ. Բալասանյան, Մ. Բերբերյան, որոնց խոսքը հնչել է մե՛րթ չափավոր, մե՛րթ ծայրահեղ ու կոպիտ դրսևորումներով: Քննելով XIX դարի վերջին տասնամյակների ու XX դարասկզբի բանավեճերը հայ մամուլում, Դ. Պետրոսյանը դիտում է. «Իր ժամանակակիցների հանդեպ Լեոյի կողմնակալ վերաբերմունքի հիմնական պատճառը Մ. Բերբերյանը համարում է այն, որ նրա «քննադատական կշեռքը» «Մշակն» է, որի գաղափարական շրջանակի մեջ մտնողներն ու չմտնողները արժանանում են համապատասխան գնահատականի. մտնողները գովաբանվում են, չմտնողները՝ արժանանում հայիոյանքի: Նման մոտեցման արդյունքում «Մշակին» չհամակրող գրողները (Շիրվանզադե, Մուրացան, Վ. Փափագյան) ոչ միայն ըստ արժանվույն չեն գնահատվում, այլև ստանում են վիրավորական բնորոշումներ»¹

Թե ի՞նչ պատճառաբանվածությամբ ու քննական մղումներով, ի՞նչ սկզբունքայնությամբ էր առաջնորդվում գրաքննադատ Լեոն յուր տեսական

¹ **Պետրոսյան Դ.**, *Գրական բանավեճերը 20-րդ դարի հայ մամուլում, Ե., Երևանի համալսարանի հր., 2007 (այսուհետև՝ Պետրոսյան Դ.), էջ 291:*

ընդհանրացումներում, քննադատության դիրքորոշման ու էության, տեսաբանի դերի ու ծրագրայնության մասին գրական մշակների ու բանաստեղծական երկերի հանդեպ, երևում է թե՛ «Կրիտիկան հայ մամուլի մեջ» հոդվածում («Կրիտիկան կոնտրոլ է մարդկային մտքերի վրա»), թե՛ «Ռուսահայոց գրականությունը....» ուսումնասիրության՝ «Մի քանի խոսք ընթերցողին» ներածական խոսքում:

Ըստ մեկնաբանի՝ քննադատությունը «միշտ և ամեն տեղ անհատական, անձնական բնավորություն ունի, քանի որ քննադատը իր կարծիքների, իր անձնական տպավորությունների վրա է գլխավորապես հիմնվում: Քանի քննադատներ, այնքան կարծիքներ,- այսպես կարելի է ասել», փորձելով իր չկամությունը անտեսանելի դարձնել, նպատակաուղղվածությունը ոչ անձնական հակվածությունը, այլ իր՝ հերքողի ճշմարիտ ձիրքը, «իմ հայացքները, իմ ըմբռնողությունը, համոզմունքները, գրական դաստիարակությունս»¹:

Այս սխալ դիրքորոշմամբ Լեոն իր կրիտիկայի սլաքը ուղղեց նաև Մուրացանի թե՛ «Ռուզանի»-ն, թե՛ «Անդրեաս Երեցի»-ն:

Հիպպոլիտ Թենի կուլտուր-պատմական դպրոցի հետևորդներ Լեոյի և իր հակառակորդների ու այլևայլ սկզբունքներում կանգնած, իր հետ պոլեմիկայի մեջ մտնող հեղինակների բանակոծիվներից հետևություն անող տեսաբան Դ. Պետրոսյանը նկատում է. «ա) Երկու դեպքում էլ Լեոն հավատարիմ է մնում սկզբունքներին և շարունակում է գրական գործընթացները քննել օգտապաշտական հայացքների դիտանկյունից, բ) հավատարիմ է մնում սկզբունքներին»²:

Իսկ ինչ քննաչափով Լեոն անդրադարձավ «Անդրեաս Երեց»-ին, որի դեպքում Մուրացանը Լեոյի շարադրանքը համարում է «սուր և անխիղճ հերյուրանք»³:

Արդյոք «տիրացուական ազգասիրության» ազդակներ կա՞ն «Հայ բողոքականի ընտանիքը», «Իմ կաթողիկ հարսնացուն» և «Անդրեաս Երեց» երկերի քննադաշտում՝ դա հարցի մի կողմն է և, ըստ ընդհանրության՝ այդ երկերի միջև դիտված եզրերը գրեթե բացակայում են: Դրանց շուրջ բանավիճային դաշտը ակտիվ կերպով թեր ու դեմ մեկնաբանող հերքումներ ու հաստատումներ է արձանագրել (Լեո, Վ. Փափազյան, Վ. Պարտիզունի, Ա. Օհանյան և այլն), հայրենասիրության, անձնագոհության փաստարկումներ հայտնաբերել «Անդրեաս Երեց»-ում. հարցին անդրադառնանք մի այլ կարևոր քննօղակից՝ ազգային գաղափարակառույցն ամրապնդող եզրույթից:

«Անդրեաս Երեց»-ի պատմական առանցքը XVII (1601-1617 թթ.) դարի առաջին տասնամյակներին Հայաստանում տեղի ունեցած պատմական ծանր ու

¹ **Լեո**, Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը, Վենետիկ, Մ.Ղազար, 1904, էջ 2:

² **Պետրոսյան Դ.**, էջ 293:

³ **Մուրացան**, Իմ երկերի քննադատության առիթով, «Լումա», 1909, N 4, էջ 59, տե՛ս Մուրացան, ԵՃ, հինգ հատորով, հատոր հինգերորդ, ՀայՊետհրատ, 1954:

ողբերգական իրադարձություններն էին՝ պարսկական շահաբաայան արշավանքները դեպի Հայաստան, ապա ունիթոր կոչված պապական արքանյակների «սխրանքները»՝ քանդել հայ ընտանիքների սրբությունները՝ միմյանց օտար, թշնամի, կաթուղի դարձնել ընտանիքի անդամներին, որսավոր անմեղ հոգիներ: «Սրա վրա էլ,- «Անդիեաս Երեց»-ի «Նախադրություն» սկզբնամասում գրում է Մուրացանը,- պետք է ավելացնել ունիթոր կամ միաբանող կոչված պապական արքանյակների սխրագործությունները, որոնք դեռ 13-րդ դարու կեսից մուտ էին գործել մեր աշխարհը և ամեն տեղ տարածվել, սկսած Ռուբինյան թագավորության երկրից մինչև Հայաստանի հեռավոր նահանգները: Անհավատներին քրիստոնեություն քարոզելու փոխարեն, դրանք նահատակ հայ ժողովրդի անդամներին էին որսում, հայրենի եկեղեցուց հեռացնում և «միաբանող» լինելու փոխարեն՝ բաժանող և պառակտող հանդիսանում: Հեռացնելով որդին ծնողից, եղբայրը եղբորից, կինը ամուսնուց՝ ընտանիքների ու հարազատների միջից սերն ու միությունը վերացնում էին: Այսպիսով մահմեդական հրեշների թողած պակասը դրանք էին լրացնում և դեռ մի բան էլ ավելի, որովհետև մահմեդականները նյութապես էին կեղեքում, իսկ դրանք՝ հոգեպես ու բարոյապես»¹:

Անշուշտ, ազգության ֆիզիկական հարստության՝ պետականության, բացակայության դեպքում, բարոյական հարստության արժեքն ավելի են բարձրացնում ազգության հոգեկերտվածքը ժառանգած նրա մտավոր գործիչները, որոնց կարելի է հանդիպել պատմության դժվարագնա ճանապարհներին՝ հայության ողբերգական ճակատագիրը ներկայացնող թե՛ պատմական, թե՛ վիպական կերպավորումներում:

Եվ, ինչպես Գյոթեն իր փիլիսոփայական վեպերում արդեն համոզված է, որ ինքն էլ խորապես չի կարող իր հերոսի բարդ ներաշխարհը բացահայտել, ուր մնաց քննադատությունը, նույնպես Մուրացանի պատմական վեպում վերողիտված գաղափարահիմք հանդիսացող կառույցում կա ամբողջությամբ բացահայտելի երրորդ առանցք, սարսափ տարածող, ազգի գենեֆոնը կլանող գործոն, որն իր հերթին ևս չարիքների չարիքն էր հանդիսանում ու համակողմանի վերլուծության կարիք ունի: Դա պատմական աղբյուրներում փաստված «մանկածողովն» էր՝ «ղեշիբմեն»: Այն հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի համար, իր բերած ու սպասվելիք ծանր հետևանքներով հղի ազգային ողբերգության երակ էր հանդիսանում, կործանարար ճանապարհ: Եվ ոչ միայն:

Պարսից շահերը իրենց գրաված երկրներում հայտարարում և իրագործում էին այդ դաժան օրենքը՝ «ղեշիբմեն»-մանկածողովը: «Մանկածողով» հատկապես հայտարարում էին հայերից, հույներից և մի քանի այլ նախորոշված

¹ *Մուրացան, Եժ, յոթ հատորով, հատոր հինգերորդ, Ե., ՀայՊետշրատ, 1963 (այսուհետև՝ Մուրացան, հատոր հինգերորդ), էջ 68:*

ազգերից. նշանակում է, այն իր խորքում միաժամանակ համազգային աղետ էր հանդիսանում:

Երևանը գրաված ահեղ և խորամանկ պարսից Շահ Աբաս արքան «կամենում էր մի երկու շաբաթ անցցնել Նախիջևանում, հայերի հյուրասիրությունը վայելելու համար»¹:

Իր հին հաշիվներից ելնելով, փորձելով վրեժխնդիր լինել Անդրեասից, որի գեղեցիկ կինը՝ Վարդենին, իր սերը արհամարհելով, նախապատվել էր առաքինի, ազնվաբարո երեցին՝ Անդրեասին, նենգապատիր Շահոռխ Բեկը առաջարկում է շահին հյուրընկալելու վայր գեղատեսիլ Ագուլիսը, որտեղ և շահի հրամանով կկատարվեր **«մանկաժողովը»**:

«Անդրեաս Երեց» վեպի (Մուրացանը այն պատմական վիպակ է անվանում²) նյութը, ի սկզբանե, առաջին հերթին «մանկաժողովներից» վթարված հայության անելանելի իրավիճակի պատմությունն էր ներկայացնում՝ XVII դարի պատմաքաղաքական իրադարձությունների ընդհանուր ֆոնին՝ շահաբասյան **գաղթերի**՝ **«մեծ սուրգունի»** և **«մանկաժողովների»**՝ **«ղեշիբմեի»** նկարագրությամբ, որովհետև սրանք իրենց խորքում հայ ժողովրդի համար ծանր հետևանքներով հղի պատմական փաստեր էին ներկայացնում, որոնք, ինչպես նշեցինք, Մուրացանի վեպում որպես առաջնահերթ քաղաքական, փիլիսոփայական հարցադրումներ են ներկայանում:

Մանկաժողովները երկու՝ **«տղայաժողովի»** և **«աղջկաժողովի»** կարգով էին կատարվում: Օտարների կողմից իրականացվող այդ անմարդկային, հանցագործ, բացասական երևույթները, հետապնդած ծրագրերը՝ իրենց հետևանքներով, իրենց խորքում անչափ դաժան էին:

Մանկաժողովների միջոցով հայերից և այլ ժողովուրդներից որպես հարկ վերցված մանուկներին (**տղա և աղջիկ**) կամ լցնում էին շահի հարեմները, կամ դարձնում էին կատաղի ենիչերներ՝ ուղղորդելով իրենց իսկ ծնած ժողովրդին կեղեքելու, բռնաբարելու, ոչնչացնելու ծրագրի իրագործմանը, կամ՝ որպես ստրուկներ, վաճառում էին և այլն:

Մովսես Անապատականի երբեմնի ուշիմ, շնորհաշատ աշակերտ, արդեն Ագուլիսի դպրոցի վերակացու և ուսուցիչ տեր Անդրեաս Երեցը, իմանալով մանկաժողովի մասին, ի սկզբանե ահա նմանատիպ չարիքի առաջն է ուզում առնել՝ շահի դաժան հրամանից փորձելով փրկել իր սիրասուն և ձեռնասուն, հոգեսուն աշակերտներին:

Անդրեաս Երեցը նախօրոք **արհեստական գոնջ (ժամանակավոր մազաթափող նյութ)** է պատրաստում և քսում իր աշակերտների գլուխներին՝ մազաթափելու, որպեսզի, երբ շահի առջևով շարքերով անցնեն՝ տգեղ ու այլանդակ երևան ու չիրականանա օրենքի ուժ ստացած մանկաժողովը, քանզի

¹ *Մուրացան, հատոր հինգերորդ, էջ 75:*

² *Տե՛ս նույն տեղում, էջ 63:*

տգեղներին, հիվանդներին չէին ընտրում: Ցավոք սրտի, «**մոտիկ**» մարդիկ Անդրեասին մատնում են շահի առջև: Վերջինս, իր շահական մեծափառությունը անարգված տեսնելով, Անդրեաս երեցին դատապարտում է կախաղանի:

Իր հաղթանակից ցնծացող Շախուխ բեկը, երբեք չէր կարող կռահել, որ իրեն ներկայացող և իր ամոթալի առաջարկն առերես ընդունող Վարդենին կարող էր սրի մի հարվածով սպանել իրեն, ցույց տալով հայ կնոջ հերոսական ու առաքինի վարքը՝ արժանի իր սիրած ամուսնուն ու իր սնած, թանկագին ժողովրդին:

Ինչպես տեսնում ենք, շահի հրամանով կախաղանի ենթարկված Անդրեաս Երեցի կատարած հանդուգն ու աննախադեպ սխրանքն իր խորքում դեռևս տիրացուական ոչ մի քայլ չէր հիշեցնում. նա իմացյալ կերպով դիմադիր է եղել շահի հրամանին՝ մանկաժողովից փրկելու հայ մանուկներին, պատանիներին՝ իր աշակերտներին, նրանց հետագա ծանր ճակատագիրը շեղելու առաքելությամբ:

Վիպական հետաքրքիր անցումներով են զարգանում վեպի մեջ կատարվող հետագա գործողությունները: Հերոսական շերտերով է տրված Անդրեաս Երեցի կերպարը, գեղարվեստական վառ գույներով՝ պատվասեր և խիզախ հայ կնոջ՝ Վարդենու վիպապատումը:

Պարսկական զագրելի տիրապետության չարիքը փորձում է իր հունձքը առատ դարձնել... Վիպական գործողություններին զուգահեռ բացվում է փորձության ենթարկված Անդրեաս Երեցի՝ հայրենասիրական մղումին ուղղորդված առաքելությունը սասանելու և այս կերպ նրան կախաղանի ճիրաններից փրկելու առաջարկը. այն է՝ պապական արքայականների, պապի նվիրակ Չիտտադինի և ունիթորների կարգապետ հայր Երազմոսի խորհրդին հետևել, դառնալ ունիթորական, մերժել հայրենի եկեղեցին և փրկվել կախաղանից:

Ազգային գաղափարակառույցն ամրապնդող իր վարքով, առաքելությամբ զարդարված, իր սրբազան **հայրենիքն ու հավատն** աներեր պահող երիտասարդը մերժում է քրիստոնեական միաբանությունը պառակտող ունիթորների առաջարկը՝ ամուր մնալով իր **հավատի** վճռում...

Նրան իր ընդունած վճռից չի սասանում նաև պարսիկ կրոնապետի պահանջը՝ ուրանալ քրիստոնեական հավատը, ընդունել մահմեդականություն՝ փրկվելու կախաղանից:

Իր հայրենիքի գենեֆոնդի ծաղիկը փրկող հայրենասեր երիտասարդը՝ այդ պահին հայրենիքի սրբությունները պահպանող զինվորը, ազգային գաղափարակառույցին նվիրված գիտակից մարտիկը, չի սասանվում իր ընտրած ճանապարհից և մերժում է բոլոր սին ու պատվազուրկ, վտանգավոր առաջարկները՝ փրկվելու կախաղանից՝ անմահանալով իր ընտրած հերոսական ճանապարհին:

Ահա այս ազգային գաղափարակառույցի ու ազգության հավատի պահպանման զինվորն է արիական-հերոսական բնույթագրումներով փայլող Անդրեաս Երեցը:

Անդրեասը՝ Մուրացանի բարոյական ու քաջագուն, վսեմ հատկություններով պսակյալ իդեալ հերոսը, նահատակվել է 1617 թ. նոյեմբերի 18-ին:

Անդրեաս Երեցը, նկատի ունենալով Չիտտադինի և պարսկական հովվապետի առաջարկները (ամենից առաջ նրա սխրանքը մանուկներին՝ հայ գենեֆոնդի սերուցքին՝ իր սիրասուն աշակերտներին, փրկելն էր) գոչում է. «Ուրեմն, նա ինձ առաջարկում էր այն, ինչ որ ինքը, մեծափառ շահը: Մինը պահանջում էր՝ թողնել քրիստոնեությունը և լինել մահմեդական, մյուսը առաջարկում էր՝ թողնել հայությունը և լինել կաթոլիկ... Արդյոք այս երկու առաջարկներն էլ միևնույն կշիռը չունին, երկուսն էլ միաժամանակ չէին պահանջում, որ ես դավաճանեմ իմ ազգին, իմ հայրենական եկեղեցուն: Հարկավ այդպես է: Ուստի ես բացե ի բաց մերժեցի հայր Երազմուսին և նախատեցի նրան՝ յուր անարգ առաջարկի համար: Բայց ահա,- շարունակում է յուր վրդոհվալից խոսքը Արդրեասը,- ինչպես տեսնում եք, պապի իմաստուն ծառաները չեն գոհացել իմ մերժմամբ. նրանք խնդրել և ստացել են շահից իմ ազատության հրամանը, որպեսզի կարողանան ձեզ ասել թե՝ «տեսեք հայեր, որքան հզոր և կարող է պապը, որքան մեծ ու անսահման է նրա իրավունքը.- այն մահապարտը, որին ազատել չկարողացան բոլոր հայերը ու պարսից ավագանին, ազատեց մի Չիտտադինի, լոկ Հռովմա պապի անունով... Եկեք, ուրեմն, հայեր, խոնարհեցեք այդ գործության առաջ, թողեցեք ձեր ազատությունը, ձեր եկեղեցին, ձեր լույս հավատը, սուրբ Էջմիածինը և դարձեք ծառա Հռովմա գահին...»: Օ՛հ և օ՛հ, հայոց ժողովուրդ. մի՛ ուրախանաք այս նենգամիտ շնորհով, որն այսօր մի հոգի փրկելով՝ վաղը հարյուրը պիտի կորցնե. այսօր մի տեր-Անդրեաս ապրեցնելով՝ վաղը նման տասին պիտի մեռցնե,- չեմ ասում սրով, այլ հոգվով ու սրտով...: Մի՛ ընդունեք ուրեմն այս շնորհը, մի՛ գոհանաք այս մարդկանց ձեզ արած ծառայությամբ: Զոհեր տվեք աներկյուղ, եթե այդ պահանջում է ձեր եկեղեցվո ազատությունը»¹:

Անդրեաս Երեցն ամուր և անսասան է պահում իր հավատո հանգանակը և մտադիր չէ իր վճռից հրաժարվել՝ նահատակվելուց փրկվել հանուն իր ազատության. «... Զի հայոց եկեղեցին գորավոր է և նա յուր հիմքը փորող բազուկները կջախջախե: Նա գորավոր է ոչ թե աշխարհակալ արքաների պաշտպանությամբ, այլ յուր անձնվեր որդվոց նահատակությամբ, և նա չի ընկճվիլ, չի հաղթահարվիլ, թեկուզ Հռովմա պապը և Ֆռանգի թագավորները՝ քրիստոնեության թշնամի Շահաբասի հետ միացած աշխատեն նրան կործանելու համար: Կգա ժամանակ, երբ մեր այս Սյունիքում, ուր դուք այսօր հաստատվել և ամեն կողմ ցանցեր եք սփռել, ձեր հետքն անգամ չի երևալ, և

¹ *Մուրացան, հատոր հինգերորդ, էջ 220-221:*

հայոց հայրենական եկեղեցին կլինի միակ հովանավորողը յուր հարազատ զավակների...»¹, - անպատմելի գայրույթով գոչում է Անդրեասը:

Անդրեաս Երեցն աներկյուղ պատռում է իր ազատության համար կնիքված, շահի կողմից տեր-Մաթևոս Երազմուսի և տեր Մարիա-Չիտտադինիի միջոցով ուղարկված հրամանագիրը: Դահճապետը այդ հանդգնությունը տեսնելով, դաշյունի հարվածներ հասցնելով թափում է քահանայի փորոտիքը՝ հրամայելով նրան կախաղան բարձրացնել: Ապա անթիվ սրահարվածներով թրատում է Անդրեաս Երեցի աղոթող և խաչակնքող ձեռքերը և մարմնի մնացած անդամները...

Անարգված շահի հրամանով թրահարված, գլխիվայր կախաղան բարձրացված Անդրեասի մարմինը ձգեցին բաց դաշտ, որ գազանները բզկտեն նրա մարմինը...

Անդրեաս Երեցի մարմինը հսկող հայերին, մելիքներին դժվարությամբ է հաջողվում առնել անողոք շահի համաձայնությունը՝ հողին հանձնել նահատակին...

Անդրեաս Երեցը պատմական և վիպական կերպավորում է: Նրա առաջին վիպական կերպավորումը տվել է **XVI դարի վերջի և XVII դարի առաջին քառորդի նշանավոր գործիչ, փիլիսոփա, Լիմի միաբանության հիմնադիր առաջնորդ, բանաստեղծ-տաղերգու Ներսես Մոկացին** իր՝ «Գանձ նոր նահատակին և սուրբ քահանային Անդրեասի Նախճաւանցոյ, որ կատարեցաւ ի Շահ-Աբասէն, ասացեալ շնորհալի վարդապետին Բեղլու Ներսէս կոչեցեալ Մոկացի» գանձում՝ նվիրված Անդրեաս Երեցի հաստատականության, հավատի պահպանման և հերոսական նկարագրին ու նահատակության մանրամասներին, անձ, ով իր մահով փրկել է շատերի կյանքը և անմահացել: Գանձը գրվել է ականատեսի ու ականջալուրի թարմ ազդեցությամբ ու վկայությամբ, մեծ սիրով ու նվիրաբանությամբ:

Ներսես Մոկացին ծնվել է **պատմական Հայաստանի Մոկք գավառի Ասկնջավս գյուղում**, ունեցել է **Վանեցի և Բեղլու** անվանումները:

Ներսես Մոկացու և՛ գանձը, և՛ տաղը խազավորված են, որը վկայում է նրա ունեցած երաժշտական գիտելիքների մասին:

XV դարից սկսած մինչև XVII դարի առաջին տասնամյակները՝ տարբեր ժամանակահատվածներում տեղի ունեցած մանկաժողովների՝ դեշիրմեի, շահաբայան ծանր գաղթերի՝ մեծ սուրգունի, Շահ Աբասի կերպարի տարաբնույթ՝ չար ու բարի բնութագրումների մասին պատմավիպական տեղեկություններ են պահպանված XVII դարի պատմիչներ, ժամանակագիրներ Գր. Դարանաղու, Զաքարիա Սարկավագի, Առ. Դավրիժեցու, Ներսես Մոկացու երկերում և նորագույն ու արդի ժամանակաշրջանում՝ Լորետա Դանեղյանի և այլոց քննական ուսումնասիրություններում:

¹ Նույն տեղում, էջ 221:

Երանելի **Մաղաքիա Դերջանցի վարդապետին** հաջողվել է մեծ փրկագնով անվավեր դարձնել շահի այդ վայրենի ու սարսափներով լի, քաղաքական դիմագիծ ունեցող հրեշավոր հրամանագրերը:

Ամենից առաջ, մեր վիպական հերոսների զարմանահրաշ առաքինություններին կարող ենք հանդիպել պատմական վավերագրերում, իսկ թե ինչ սկզբունքներից ու գաղափարակառույցից են խնդրառություն ընդունում վիպասան-գրողները, բանաստեղծները իրենց երկերը հյուսելիս՝ իրենց ապրած ժամանակաշրջանի ազգային գաղափարաբանության հրամայականից է կախված:

Այս կարևոր հանգամանքը պետք է հաշվի առնեն ուսումնասիրողները՝ ամենից առաջ քննելով պատմությունը, պատմական վավերագրերը, վիպականությամբ շաղախված հերոս-նահատակների թողած ուսանելի դասերը, նրանց զարմանահրաշ վարքաբանությունը, որոնք սերունդներ են դաստիարակել ու դաստիարակելու են դեռ, նաև նորօրյա մեր հերոս նահատակներին առած իրենց քրքրված ու սրբացված վարքամատյանը՝ ահեղ վկայության ու ներկայության պես:

Հիրավի, ճշմարիտ է դիտել Ս. Մարինյանը գրելով. **«Մուրացանը ներկային պատասխանելու համար հարցում է անում անցյալից»:**

Մուրացանի հերոսների բույլը: **Անդրեաս Երեց.** Ազնվագույն հերոսականություն ու ազգային գաղափարակառույցն ամուր պահպանող երդվյալ հերոս-նահատակ՝ վիպապատմական, փիլիսոփայական, գեղագիտական, հավատաքննչական օրենքների հավատի պահապան, գեղեցիկ արարումներով սրբացված, անմահացած Հայոց ժամանակների ու նրա Կերոսների անթվակիր շարքում...

Դյուցազնական ու անքննելի է Նրանց հավերժական երթը, հիշատակը անմար՝ միշտ և ամենուր՝ դարերի-ժամանակների հոսքում՝ խոնարհման, խնկարկման արժանի...

Եզրաբանության փոխարեն՝ ըստ Ս. Մարինյանի. «Ոչ մի գրող այնպես չի սահմանափակել իրեն գրական-պատմական պրոցեսից և այնպես չի օտարել իրեն գրական միջավայրից, ինչպես Մուրացանը»՝ որպես «հայ գրականության պատմության մեջ մի չափազանց առանձնակի երևույթ»¹:

Հիրավի, գրական մեծություն, որը՝ ըստ Դեմիրճյանի, որպես զբաղմունքի առարկա էր ընտրել Շեքսպիրին, Գյոթեին, Բայրոնին, Հայնեին, Պուշկինին, Լերմոնտովին..., Եսքիլեսին, Մոֆոկլեսին, Եվրիպիդեսին և այլ երևելիների...

Պատմության և գրականության փիլիսոփայության, մեթոդաբանության, ազգային գաղափարաբանության մուրացանյան գեղարվեստի մոդելը («Ռուզան կամ հայրենասեր օրիորդ», «Գևորգ Մարգալետունի», «Անդրեաս Երեց»), հիրավի պատմական նյութի հանդեպ հեղինակի ստեղծագործական ինքնատիպ,

¹ Մարինյան Ս., Մուրացան, Ե., «Հայաստան», 2004, էջ 60:

բարձրակարգ մոտեցումները՝ իրենց բարերար ազդեցությամբ հանդերձ, անչափ շոշափելի են հայ պատմավիպագրության, և ընդհանրապես, արձակի զարգացման վրա՝ ավանդականի և նորի ոճավորմամբ, զուգահեռմամբ՝ ինչը գրականության նորոգության, մերձեցման, ավանդների շարունակման աղերսներ է արձանագրում:

Գրականություն

ա) Բնագրեր-սկզբնաղբյուրներ

1. Մուրացան, Իմ երկերի քննադատության առիթով, «Լումա», 1909, N 4, տե՛ս Մուրացան, ԵԺ, հինգ հատորով, հատոր հինգերորդ, ՀայՊետհրատ, 1954:
2. Մուրացան, ԵԺ, յոթ հատորով, հատոր հինգերորդ, Ե., Հայպետհրատ, 1963, 347 էջ:

բ) տեսաքննական աղբյուրներ

1. Լեո, Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904:
2. Պետրոսյան Դ., Գրական բանավեճերը 20-րդ դարի հայ մամուլում, Ե., Երևանի համալսարանի հր., 2007, 368 էջ:
3. Սարինյան Ս., Մուրացան, Ե., «Հայաստան», 2004, 248 էջ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Բ.Գ.Դ., Ս.Ա.Խանյանը: